# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ- 24/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 09.04.2024թ. ժամը 12:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Աղասի Թադևոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ժորա Խաչատրյան

Անահիտ Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Շելեգոն

Ժամը 12:00 գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

**1.Էլեկտրոնային հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին**

(Աղասի Թադևոսյան)

- Մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին, բացառությամբ «ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ի, «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի, «ՍԵՎ-ԱՐՏ» ՍՊԸ-ի և «Նորիկ Մակարյան» Ա/Ձ-ի կցած հայտերի:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0 :

**2.Բացված յուրաքանչյուր Էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

(Աղասի Թադևոսյան)

- Բոլոր փաստաթղթերն առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0

**3. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

(Աղասի Թադևոսյան)

- Բոլոր փաստաթղթերն համապատասխանում են, բացառությամբ «ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ի, «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի, «ՍԵՎ-ԱՐՏ» ՍՊԸ-ի և «Նորիկ Մակարյան» Ա/Ձ-ի: Մասնավորապես,
    1. «ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ի Հավելված 1-ում ներկայացված չափաբաժինները չեն համապատասխանում Հավելված 2 /ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ/ և Հավելված 1.1/Նկարագիր/:

2. «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած Հավելված 1.1-ում /ՆԿԱՐԱԳԻՐ/ ընթացակարգի ծածկագիրը լրացված է սխալ:
3. «ՍԵՎ-ԱՐՏ» ՍՊԸ-ի Հավելված 1-ում/ ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:
4. «Նորիկ Մակարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերում բացակայում է Հավելված 1.1-ը

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

## 4. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին

(Աղասի Թադևոսյան)

- Հարցումներ չեն եղել, բացառությամբ «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի, «ԱՊԵՔՏՐՈՒՄ ԹԵՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի: Մասնավորապես

<u>«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ</u>

Հարց: Հարգելի պատվիրատու. Խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցերը՝ Հարց 1. 1-ին չափաբաժնի համար ընդհանուր քանակը 15 է, իսկ պահանջվող քանակը՝ 10: Ո՞րն է սխալ: Հարց 2. 3-4 չափաբաժիններով պահանջվող տպող սարքերի համար "առանց տպման քանակի սահմանափակման" պահանջը կոռեկտ չէ, քանի որ նման սարք գոյություն չունի:Նույն չափաբաժիններով պահանջվող տպող սարքերի համար կարևոր չե՞ն ասենք նրանց տպման արագությունը, թղթի չափը և այլն: Հարց 3. 12-րդ չափաբաժնի համար պահանջվող WiFi սարքը կոնկրետ ի՞նչ սարք է: Հարց 4. 19-րդ չափաբաժնով պահանջվող բաժանարարը ի՞նչ արագությամբ պիտի լինի: Հարց 5. 29-րդ չափաբաժնով պահանջվող հոսանքի անխափան սնուցման սարքի հզորությունը 1200W (վատ) է, թե 1200VA (վոլտ/ամպեր): Ուրիշ պահանջ չկա՞ էդ սարքերի համար: Ո՞րտեղ և ի՞նչ սարքերի հետ է այն կիրառվելու:

Պատասխան: Հարց 1 1-ին չափաբաժնի համար ընդհանուր քանակը 15 է փոփոխությունը կտեղադրվի Հարց 419-րդ չափաբաժնով պահանջվող բաժանարարի արագությունը ոչ պակաս 100ՄԲ, ոչ ավել 1 ԳԲ:

<u>«ԱՊԵՔՏՐՈՒՄ ԹԵՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ</u>

Հարց: Հարգելի պատվիրատու,27-րդ չափաբաժնում նշված RJ 45 Կոնեկտորը լինում է 2 տեսակի,մամա պապա: Ձեզ որն է պետք:

Պատասխան: Հարգելի գործընկեր, մեզ անհրաժեշտ է UTP մալուխին ամրացվող կոնեկտորը (պապա)

Հարց: Հարգելի պատվիրատու, 13 և 14-րդ չափաբաժիններում նշված չիպերը լինում են չափերով 2 տեսակ, ինչպես նաև տարբեր հարթությունների վրա ամրացվելու հնարավորությամբ և առանց այդ հնարավորության: Խնդրում եմ ավելի մանրամասն բնութագիր ներկայացրեք,եթե իմ նշած առանձնահատկությունները կարևոր են:
Պատասխան: Հարգելի գործընկեր, 13, 14-րդ չափաբաժինների չիպերից նախընտրելի են փոքր չափերը, ցանկալի է բրելոկի տեսքով:

<u>«ՊՍՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ</u>

Հարց: Հարգելի պատվիրատու, 3-րդ և 4-րդ չափաբաժինների բազմաֆունկցիոնալ լազերային տպիչների տեխնիկական բնութագրերում նշված է՝ "առանց տպման քանակի սահմանափակման (առանց չիփի)": Խնդրում ենք պարզաբանել, ընդունելի է արդյոք համարժեք տպիչի մոդել, որի քարթրիջի չիպը ապակոդավորված է, ինչը թույլ է տալիս քարթրիջը առանց չիպը փոխելու բազմաթիվ անգամ լիցքավորել և օգտագործել:

Պատասխան: Հարգելի գործընկեր ընդունելի են Canon կամ Canon -ին համարժեք տարբերակներ, որոնց չիպերը կարիք չունեն ֆիզիկական ապակոդավորման:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

## 5. Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված

**որոշումների մասին**

(Աղասի Թադևոսյան)

- Բողոքներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

**6. Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին**

(Աղասի Թադևոսյան)

- Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

«Ջի ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ին, «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին, «ՍԵՎ-ԱՐՏ» ՍՊԸ-ին և «Նորիկ Մակարյան» Ա/Ձ-ին առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և անհրաժեշտ փաստաթղթերը ուղարկել :

*Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը հետաձգվում է սույն թվականի ապրիլի 15-ին ժամը12:00-ին:*

Հանձնաժողովի նախագահ՝ Աղասի Թադևոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ժորա Խաչատրյան

Անահիտ Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Շելեգոն